ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երևան 29 հունիսի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

Նախագահությամբ՝ Կ. Բալայանի

Անդամակցությամբ՝ Վ.Հովհաննիսյանի

Զ.Ղուկասյանի

Քննության առնելով *«ԿԱՌ-ԱՎՏՈ» ՍՊԸ և Վազգեն ու Էրնեստ Դանիելյանների՝* դիմումի ընդունելիության հարցը,

ՊԱՐԶԵՑ.

1. «ԿԱՌ-ԱՎՏՈ» ՍՊԸ և Վազգեն ու Էրնեստ Դանիելյանները 15.06.2009թ. դիմել են ՀՀ սահմանադրական դատարան՝ վիճարկելով «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով, 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերով, 6-րդ հոդվածով, 7-րդ հոդվածով, 8-րդ հոդվածով սահմանված դրույթների սահմանադրականությունը:

2.Դիմողները խնդրում են «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասը, 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 6-րդ հոդվածը, 7-րդ հոդվածը, 8-րդ հոդվածը ճանաչել ՀՀ Սահմանադրության 3 հոդվածին, 8 հոդվածի 1-ին մասին, 31 հոդվածի 3-րդ մասին, 24 հոդվածին, 18 հոդվածի 1-ին մասին և 19 հոդվածի 1-ին մասին հակասող և անվավեր:

Վիճարկվող դրույթների հակասահմանադրականության վերաբերյալ դիմողները ներկայացրել է հետևյալ հիմնավորումները.«...Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի սահմանումը հիմնովին հակասում է ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին, որոնցից ամենևին չի բխում, որ «բացառիկ գերակա հանրային շահ»-ն է սեփականության հարկադիր օտարման հիմքը: ՀՀ Սահմանադրության տվյալ

իրավահարաբերությունների համատեքստում որպես սեփականության օտարման հիմք է ճանաչվում «հասարակության և պետության կարիքների» առկայության փաստը, այն դեպքում, երբ «... միայն բացառիկ գերակա հանրային շահերի դեպքերում» օտարումը ... իրենից ներկայացնում է օտարվող գույքի սեփականատիրոջ սեփականության իրավունքի պաշտպանության անհրաժեշտ երաշխիք:

Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը սահմանել են բացառիկ՝ գերակա հանրային շահի որոշման սկզբունքներն ու այն նպատակները, որոնք կարող է հետապնդել հանրային շահը, այն դեպքում, երբ ինչպես նշվեց, Օրենքում բացակայում է օտարման բուն հիմքի՝ «հասարակության և պետության կարիքների» սահմանումը և, սեփականության հարկադիր օտարման յուրաքանչյուր դեպքում «հասարակության և պետության կարիքների» հիմնավորման անհրաժեշտության պահանջը: [...] Այն սահմանումները, որոնք Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերում բերված են որպես «բացառիկ գերակա հանրային շահ»-ի որոշման սկզբունքներ և նպատակներ, որոնք այն կարող է հետապնդել, կրում են կամայական (չհիմաստավորված) բնույթ և բոլոր դեպքերում չեն կարող համարվել ՀՀ Սահմանադրության 31-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին համապատասխանող:

Բացի այդ Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը չեն համապատասխանում իրավական որոշակիության /res judicata/ սկզբունքին, այնքանով, որքանով Օրենքում բացակայում են դրանում անընդմեջ գործածվող «հանրային շահ», «գերակա» և «բացառիկ» եզրույթների սահմանումները: Նշված հանգամանքն անհամատեղելի է ոչ միայն ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի, 8-րդ հոդվածի 1-ին մասի և 31-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների հետ, այլև 18-րդ հոդվածի 1-ին մասին և 19-րդ հոդվածի 1-ին մասի պահանջների հետ:

Օրենքի 6-րդ հոդվածը սահմանում է հասարակության և պետության կարիքների համար օտարվող սեփականության ձեռքբերողին, սահմանելով, որ հասարակության և պետության կարիքների համար սեփականությունը կարող է օտարվել հօգուտ պետության, համայնքի կամ կազմակերպության:

Նկատի ունենալով, որ «հասարակության և պետության կարիքներ»-ի, որպես տվյալ իրավահարաբերությունը կարգավորող ելակետային դրույթի, բացակայության պայմաններում խոսք չի կարող լինել սեփականության հարկադիր օտարման մասին, ուստի Օրենքի նշված դրույթը նույնպես չի կարող համապատասխանել ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի, 8-րդ հոդվածի 1-ին մասի և 31-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջների:

[...]Օրենքի 7-րդ հոդվածի 1-ին մասը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածի, 18-րդ հոդվածի 1-ին մասին և 19-րդ հոդվածի 1-ին մասին, քանի որ, այն ընդամենը սահմանում է, որ բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին կառավարության որոշման մեջ պետք է ընդամենը նշվի այն բացառիկ գերակա հանրային շահը, որի համար պետք է օտարվի սեփականությունը: Օրենքի նշված դրույթը կառավարությանը չի պարտավորեցնում հիմնավորել բացառիկ՝ գերակա հանրային շահի առկայությունը յուրաքանչյուր դեպքում, ինչը օտարվող գույքի սեփականատիրոջը զրկում է կառավարության որոշումը դատական կարգով վիճարկելու ... հնարավորությունից:

Օրենքի 8-րդ հոդվածը չի համապատասխանում ՀՀ Սահմանադրության 3-րդ հոդվածին, 8-րդ հոդվածի 1-ին մասին, 31-րդ հոդվածի 1-ին մասին և 24-րդ հոդվածին, այնքանով, որքանով հնարավորություն է տալիս այլ անձանց՝ «ուսումնասիրողներ»-ին մինչև բացառիկ՝ գերակա հանրային շահ ճանաչելու մասին որոշման ընդունումը միջամտել սեփականատիրոջ կողմից իր սեփականության անարգել տնօրինմանը, տիրապետմանն ու օգտագործմանը և խախտել բնակարանի, անձնական և ընտանեկան կյանքի անձեռնմխելիությունը..»:

3. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն սույն հոդվածում նշված գործերով դիմում կարող է ներկայացվել ընդհանուր իրավասության և մասնագիտացված դատարաններում դատավարության մասնակից հանդիսացած այն ֆիզիկական կամ իրավաբանական անձի կողմից, որի նկատմամբ գործը լուծող վերջնական դատական ակտով կիրառվել է որեւէ օրենքի դրույթ, որը սպառել է դատական պաշտպանության բոլոր միջոցները, եւ որը գտնում է, որ տվյալ գործով կիրառված օրենքի դրույթը հակասում է Սահմանադրությանը:

Դիմողները ձևականորեն առաջ են քաշում ամբողջությամբ 6-րդ և 7-րդ հոդվածների սահմանադրականության հարցը, սակայն նրանց համար իրավական հետևանքներ առաջացրել են միայն նշված հոդվածների 1-ին մասերը, քանի որ նրանց նկատմամբ կիրառվել են միայն այդ դրույթները ՀՀ վարչական դատարանի 2008թ. սեպտեմբերի 5-ի թիվ ՎԴ/0206/05/08 վճռով:

4. Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին ՀՀ օրենքի 69 հոդվածի և ՀՀ սահմանադրական դատարանի կանոնակարգի 26 հոդվածի 2-րդ կետի պահանջներով ՀՀ սահմանադրական դատարանի 1-ին դատական կազմը

ՈՐՈՇԵՑ.

1. «ԿԱՌ-ԱՎՏՈ» ՍՊԸ և Վազգեն ու Էրնեստ Դանիելյանների դիմումը «Հասարակության և պետության կարիքների համար սեփականության օտարման մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, 4-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 6-րդ հոդվածի 1-ին և 7-րդ հոդվածի 1-ին մասի սահմանադրականությունը վիճարկելու մասով, ընդունել քննության, կազմել գործ, որով պատասխանող կողմ ճանաչել << Ազգային Ժողովին:
2. Նույն օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ մասերի, 7-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ մասերի և 8-րդ հոդվածի սահմանադրականությունը վիճարկելու մասերով, գործի քննությունը մերժել՝ դիմողների նկատմամբ կիրառված չլինելու պատճառաբանությամբ:
3. Նկատի ունենալով, որ դիմումում վիճարկվող նորմերի սահմանադրականության վերաբերյալ ՀՀ սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմի և աշխատակարգային որոշումներով (համապատասխանաբար 17.04.2009թ., 21.04.2009թ., ՍԴՈ-34) Քաղաքացի Յուրիկ Ավինյանի և այլոց դիմումի հիման վրա ՀՀ սահմանադրական դատարանը քննության է ընդունել գործ և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածով, առաջարկել միավորել այս գործերը և քննել դատարանի նույն նիստում:

Նախագահող՝

Անդամներ՝